

ՄԱՅԻՄԻ ԱՄԵՆԱՊԱՀԱՆՋՎԱԾ ԳՐՔԵՐԸ

Վիկտոր Հյուգո՝ «Փարիզի Աստվածամոր տաճարը», Ջորջ Օրուել՝ «1984», Հրայրա Սարիբեկյան՝ «Ապուշների ուղեւորությունը»: Հայաստանի ազգային գրադարանի մայիս ամսվա ամենաընթերցված երեք գրքերն են: Էլ n՞ր հեղինակներին ու n՞ր ստեղծագործություններն են նախընտրում կարդալ մեր ընթերցողները և ինչո՞ւ: Մայիս ամսվա ամենաընթերցված տասը գրքերի ցանկը ներկայացված է հոդվածում:

Վիկտոր Հյուգո, «Փարիզի Աստվածամոր տաճարը»-

Մայիսի ամենապահանջված տասը գրքերի ցանկի առաջատարը **Վիկտոր Հյուգոյի «Փարիզի Աստվածամոր տաճարն»** է: Վեպի հանդեպ ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում հետաքրքրությունը բազմապատկվեց 2019 թ. ապրիլին՝ Փարիզի Աստվածամոր տաճարում բռնկված հրդեհից հետո: Հատկանշական է, որ 12-րդ դարում կառուցված տաճարը ճանաչում էր ձեռք բերել 1831 թվականին, երբ հրատարակվեց Հյուգոյի «Փարիզի Աստվածամոր տաճարը» վեպը:

Ջորջ Օրուել, «1984»

Մայիսի ամենաընթերցված գրքերի տասնյակի երկրորդ տեղում **Ջորջ Օրուելի «1984»-ն** է: Հայաստանում այս և Օրուելի մյուս վեպը՝ «Անասնաֆերման», ավելի շատ սկսեցին կարդալ 2018-ի թավշյա հեղափոխությունից հետո: Ի դեպ, **«1984»-ի** հանդեպ Ազգային գրադարանում հետաքրքրությունը մեծացավ, և այն տասնյակի երկրորդ տեղում հայտնվեց, երբ Ազգային գրադարանի ամենշաբաթյա կինոդիտումների՝ Գրական նշանակալի երկերի ուշագրավ ցուցադրությունների շրջանակում ցուցադրվեց վեպի էկրանացումը:

Հրաչյա Սարիբեկյան, «Ապուշների ուղևորությունը»

Մայիս ամսվա ամենաընթերցված գրքերի եռյակը եզրափակում է Հրաչյա Սարիբեկյանի «Ապուշների ուղևորությունը» վեպը: Արձակագրի ստեղծագործությունները մշտապես հետաքրքրել են ընթերցողին, սակայն նրա հեղինակած գրքերն ավելի քան պահանջված դարձան այն բանից հետո, երբ Հրաչյա Սարիբեկյանն սկսեց դեկավարել Հայաստանի ազգային գրադարանը: Արձակագիրն իր ստեղծագործություններում հաճախ է անդրադառնում երկաթուղու ու գնացքների թեմաներին: «Ապուշների ուղևորություն» վեպի մեջ Սարիբեկյանը ստեղծել է սեփական ամբողջական երկաթուղային ժանրը: Նորաստեղծ ժանրին ճգնաժամ չի սպառնում մի երկրում, որտեղ երկաթուղին արդեն երեք տասնամյակ է, ինչ «կյանքի ճանապարհից» վերածվել է լքված ու ժանգոտ մետաղակույտի: Ընթերցողի հետաքրքրությունը դրա անխոս վկայությունն է. թերևս բոլորիս մանուկ հոգում դեռ վառ է մանկական երկաթուղու առասպելը:

Խալեդ Հոսեյնի, «Օդապարուկ թոցնողը»

Ազգային գրադարանի ամենաընթերցված գրքերի շարքում իրենց կայուն տեղը ունեն աֆղանական ծագմամբ ամերիկացի գրողի՝ Խալեդ Հոսեյնիի երկերը: «Օդապարուկ թոցնողը» Հոսեյնիի առաջին ստեղծագործությունն է, որը, սակայն, հայերեն է թարգմանվել նրա վերջին՝ «Եվ արձագանքեցին լեռները...» վեպից հետո: 42 լեզվով թարգմանված և 38 երկրում հրատարակված համաշխարհային այս բեսթսելլերը՝ «Օդապարուկ թոցնողը», որը նվիրված է հեղինակի մանկության Աֆղանստանին Ազգային գրադարանում մայիսին պատվիրել են 53 անգամ:

Դիանա Համբարձումյան, «Դուռը թակում են»

Դիանա Համբարձումյան, «Դուռը թակում են». Արտագաղթի, հույսի, հայրենիք վերադառնալու ձգտման մասին վեպի հանդեպ մեր ընթերցողի հետաքրքրությունը պատահական չէ: Թեման այսօր արդիական է: Շատերն են կանգնած արտերկիր գնալու կամ հայրենիքում մնալու ընտրության առջև: Հատկանշական է, որ Դիանա

Համբարձումյանի ընթերցողները հիմնականում երիտասարդներ են: Գուցեև վեպի ընթերցանությունը կնպաստի ճիշտ ընտրությանը: Համբարձումյանի նոր՝ «Փեակների տարաբախտությունը» գիրքն էլ, ի դեպ, արտերկրում հաստատված հայ ընտանիքի բարդ ճակատագրի մասին է:

Արամ Պաչյան, «Ցտեսություն, Ծիտ»

Արամ Պաչյանը մշտապես ընթերցողների սերն ու ճանաչումը վայելող հեղինակներից է: Մայիսին Հայաստանի ազգային գրադարանում «Ցտեսություն, Ծիտ» -ը պահանջվել է շուրջ 50 անգամ: Պաչյանի առայժմ միակ վեպի թեման հոգեհարազատ է շատերին. բանակից զորացրված տղայի՝ Ծտի մտորումներն են, զգայական հուշերը բանակային կյանքից:

Արամ Պաչյանը բազմաթիվ պատմվածքների, էսսեների հեղինակ է: Նա հայտնի է նաև իր վարած «Գրադարանում Արամ Պաչյանի հետ» հեղինակային ռադիոհաղորդաշարով:

Ֆյոդոր Դոստոևսկի, «Ոճիր և պատիժ»

«Միանգամից մարդ դառնալն անհնար է. պետք է մշակվել որպես մարդ», - գրում է Ֆյոդոր Դոստոևսկին, իսկ ընթերցանությունը մարդ դառնալու ամենաանխափան ուղին է: «Ոճիր և պատիժ»-ը՝ Ֆյոդոր Դոստոևսկու ամենանշանավոր երկերից մեկը, նորարական է նրանով, որ առաջին անգամ հերոսներն իրենք են պատմում իրենց ապրումների, զգացմունքների մասին. համաշխարհային գրականության մեջ «Ոճիր և պատիժ»-ով է դրվել պոլիֆոն (բազմաձայն) վեպի հիմքը:

Հայաստանի ազգային գրադարանի ընթերցողները ժամակակակից գրողներին զուգահեռ աչքաթող չեն անում համաշխարհային գրականության դասականներին: «Ոճիր և պատիժ»-ը ամսվա ընթացքում պատվիրել են 41 անգամ: Կամ էլ ուղղակի քննաշրջան է, իսկ Դոստոևսկու ստեղծագործությունները քննական հարցաշարում են...

Հովիկ Չարխյան, «Մուլամիթա. Սևակի մեծ սերը»

Նշանավոր մարդկանց նամակագրությունը միշտ էլ հետաքրքրել է ընթերցողին: Իսկ երբ հարցը վերաբերում է Պարույր Սևակի մեծ սիրուն, քչերը կարող են անտարբեր մնալ: Հովիկ Չարխյանի «Մուլամիթա. Սևակի մեծ սերը» երկհատորյակը՝ Պարույր Սևակի և բանասեր, գրականագետ Մուլամիթա Ռուդնիկի մեծ սիրո մասին պատմող նամականին Սևակին նորովի է բացահայտում: Չարխյանի «Մուլամիթա. Սևակի մեծ սերը» մայիսի ամենաընթերցված գրքերի տասնյակի ութերորդ հորիզոնականում է:

Օսկար Ուայլդ, «Դորիան Գրեյի դիմանկարը»

Հեքիաթասաց, նովելիստ, էսսեագիր, դրամատուրգ Օսկար Ուայլդի միակ վեպն ամենաընթերցվող գրքերից է աշխարհում: Երիտասարդ Գրեյի և նրա ծերացող լուսանկարի մասին այս պատմությունը շուրջ 120 տարի չի լքում համաշխարհային բեսթսելլերների ցուցակը: Ազգային գրադարանի գրադարակում էլ այն երկար չի մնում. մայիսին այն պատվիրվել է ամեն օր՝ ամսվա ընթացքում ավելի քան 30 անգամ: Գրքի նախաբանն իրավամբ կարելի է արվեստագետի մանիֆեստ համարել. «Արվեստագետը չի ձգտում ապացուցել որևէ բան: Նույնիսկ անվիճելի ճշմարտությունները կարող են ապացուցվել: Արվեստագետը բարոյախոս չէ: Արվեստագետի նման հակումը ծնում է ոճի աններելի մաներայնություն: Արվեստագետին մի վերագրեք անառողջ միտումներ: Նա կարող է պատկերել ամեն ինչ...»:

Էռնեստո Սաբատո, «Թունելը»

Մայիսի ամենաընթերցված գրքերի տասնյակը եզրափակում է արգենտինացի գրող Էռնեստո Սաբատոյի «Թունելը»: Վեպի հերոսը նկարիչ է՝ իր գոյապաշտական, հոռետեսական ապրումներով, մտքերով: Ըստ հեղինակի՝ «Թունելը» մութ հոգու պատմություն է, որը լույս է փնտրում մռայլ թունելի՝ փակուղու վերջում: Սակայն անելանելիությունն այդպես էլ չի լքում հերոսին. «Երբեմն ես կարծում եմ, որ ամեն ինչ անիմաստ է: Հազարավոր տարիներ դատարկության մեջ պտտվող փոքրիկ երկրագնդի վրա լույս աշխարհ ենք գալիս տանջանքով, մեծանում ենք, պայքարում, հիվանդանում,

տառապում, ստիպում տառապել մյուսներին, բղավում ենք, մեռնում և միևնույն ժամանակ աշխարհ են գալիս նոր մարդիկ, որպեսզի կրկնեն այդ անիմաստ կատակերգությունը»: Անհատի մենության հավերժական թեման արդիական է բոլոր ժամանակներում և շատերին է հուզում:

